ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

0009, ՀՀ, Երևան, Իսահակյան 28
Հեռ. (010) 528370, (010) 529432
Էլ.փոստ: secretariate@tvradio.am, www.tvradio.am

№ Ե/04/04.1/657-25
08.08.2025թ.

«Հետք» և «Մեդիայի գլոբալ ռեգիստր»
«Մեդիայի սեփականության մոնիտորինգ - Հայաստան»
ծրագրի թիմի ղեկավար Լիաննա Սայադյանին
Էլ.փոստ. lians@hetq.am
Հեռ. +374 94 437908

Հարգելի՛ տիկին Սայադյան,

Շնորհակալություն ենք հայտնում «Հետք» և «Մեդիայի գլոբալ ռեգիստր» կազմակերպության կողմից ներկայացված՝ «Մեդիայի սեփականության մոնիտորինգ - Հայաստան» հետազոտության շրջանակում տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ 2025 թվականի հուլիսի 30-ի Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) nctr@tvradio.am պաշտոնական էլեկտրոնային փոստին հասցեագրված Ձեր գրության համար:

Հանձնաժողովը գնահատում է մեդիայի ոլորտում թափանցիկությանն ու բազմակարծությանն ուղղված Ձեր ջանքերը և պատրաստակամ է իր կարողությունների և փորձագիտական ներուժի սահմաններում աջակցել ուսումնասիրությանը: Միևնույն ժամանակ նշենք, որ Ձեր կողմից բարձրացված հարցերը չեն գտնվում Հանձնաժողովի լիազորությունների շրջանակում, սակայն, ելնելով համագործակցության դրական ակնկալիքներից, պատրաստ ենք տրամադրել մեզ հասանելի տեղեկատվությունը, որը հավաքագրվել է բաց աղբյուրներից՝ տեսալսողական մեդիայի ոլորտի ուսումնասիրության և Հանձնաժողովի տարեկան զեկույցների[1] կազմման շրջանակներում:

Հեռուստագովազդի շուկայի զարգացումները ներկայացնում ենք ըստ տեսալսողական մեդիայի ոլորտում գործող ընկերությունների հրապարակած գնացուցակներում առկա ցուցանիշների:

---

[1] Ստորև նշված են Հանձնաժողովի կողմից հրապարակված տարեկան հաղորդման հրումները՝
https://tvradio.am/wp-content/uploads/2022/03/2021-report.pdf (էջ 7, 67)
https://tvradio.am/wp-content/uploads/2023/04/Report-2022.pdf (էջ 6, 55)
https://tvradio.am/wp-content/uploads/2024/03/Report-2023-compressed.pdf (էջ 58)
https://tvradio.am/wp-content/uploads/2025/03/Report-2024.pdf (էջ 7)

Հանրապետական և մայրաքաղաքային սփռման տեսալսողական ծրագրերում հեռարձակվող գովազդային մուտքերի ծավալներն ըստ տարիների՝

Տարեթիվ	Գովազդը կազմել է (մլն. ՀՀ դր)
2020	7,654
2021	9,914
2022	9,609
2023	9,874
2024	8,575

**Տեսալսողական հաղորդումների ընթացքում գովազդվող ապրանքները հաշվարկի մեջ չեն ներառվել:*

Տեսալսողական ծրագրերում ընդգրկված ընդհանուր գովազդային մուտքերից առանձնացված շահումով խաղերի մասնաբաժինը՝

Տարեթիվ	Գովազդը կազմել է (մլն. ՀՀ դր)	Որից՝ շահումով խաղերը (մլն. ՀՀ դր)	%
2020	7,654	716	9,4
2021	9,914	1,115	11,2
2022	9,609	371	3,8
2023	9,874		**«Գովազդի մասին» օրենքում փոփոխությունների հետ կապված*
2024	8,575	չկա	

**Gross Price*

Մարզային սփռման տեսալսողական ծրագրերում հեռարձակվող գովազդային մուտքերի ծավալներն ըստ տարիների՝

Տարեթիվ	Գովազդը կազմել է (մլն. ՀՀ դր)
2021	1,094
2022	36,9
2023	12,2
2024	45

Հանրապետական և մայրաքաղաքային ծածկույթի լսողական ծրագրերում հեռարձակվող գովազդային մուտքերի ծավալներն ըստ տարիների՝

Տարեթիվ	Գովազդը կազմել է (մլն. ՀՀ դր)
2020	1,397
2021	1,275
2022	1,482
2023	1,457
2024	չկա

Լսողական ծրագրերում ընգրկված ընդհանուր գովազդային մուտքերից առանձնացված շահումով խաղերի մասնաբաժինը՝

Տարեթիվ	Գովազդը կազմել է (մլն. ՀՀ դր)	Որից՝ շահումով խաղերը (մլն. ՀՀ դր)	%
2020	1,397	150	10,7
2021	1,275	159	12,4
2022	1-ին կիսամյակ՝ 730	100	13,7
2023	1,457	չկա	

Մարզային ծածկույթի լսողական ծրագրերում հեռարձակվող գովազդային մուտքերի ծավալներն ըստ տարիների՝

Տարեթիվ	Գովազդը կազմել է (մլն. ՀՀ դր)
2021	45,1
2022	76,5
2023	92,7
2024	չկա

Հանձնաժողովը 2022 թվականի իր տարեկան հաղորդման մեջ նշել է՝

«2022 թվականին Հանձնաժողովն, ինչպես և նախորդ չորս տարիների ընթացքում, իր լիազորությունների շրջանակներում պաշտպանել է Հեռարձակողների ինքնուրույն խմբագրական քաղաքականություն վարելը, հանդես եկել այդ իրավունքը հիմնավորող և պաշտպանող հայտարարություններով, միջնորդություններով և պարզաբանումներով, բազմիցս միջնորդի դեր ստանձնել Հեռարձակողների և իշխանության տարբեր ինստիտուտների միջև, համագործակցել տեսալսողական մեդիայի խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ:

Հանձաժողովի վերոշարադրյալ դրական գնահատականն ամենևին չի նշանակում, որ հեռարձակող լրատվամիջոցների համար ստեղծված են առանց մարտահրավերների, ազատ և անկախ գործելու բոլոր հնարավորությունները: Ոլորտի բնականոն գործունեությանը խոչնդրոտում են մի շարք գործոններ, որոնց թվում են՝

ա. վերջին տարիների ընթացքում գովազդի ծավալների անկումը (2019-2022 թթ. գովազդային մուտքերի ծավալները ներկայացված են Հավելված N 1-ում),

բ. եթերային հեռարձակողների՝ տեսալսողական ծրագրերի դիտողականության շարունակական անկումն ու կարգավորման ներքո գտնվող Հեռարձակողների և համացանցում տեսալսողական ծառայություններ մատուցող ընկերությունների միջև մրցակցային անհավասար պայմանները,

գ. սահմանափակ ռեսուրսի (սլոթերի և հաճախականությունների) օգտագործման պետական հայեցակարգի, ռազմավարության բացակայությունն ու օրենսդրության անկատարությունը:

Այս համատեքստում կարևոր ենք համարում Ազգային ժողովի ուշադրությունը հրավիրել հետևյալի վրա. լիցենզավորված Հեռարձակողների գովազդային մուտքերի կրճատումը նաև հետևանք է վերջին տարիներին «Տեսալսողական մեդիայի մասին», «Գովազդի մասին» օրենքներում կատարված բոլոր փոփոխությունների:

Կասկածի տակ չդնելով օրենսդրական փոփոխությունների հանրային կարևորությունը (շահումով խաղերի գովազդի արգելքի, հանրօգուտ հաղորդումների նվազագույն քանակի ամրագրման, հայերեն հաղորդումների քանակի նվազագույն շեմի բարձրացման և այլն)՝ այնուամենայնիվ, պետք է արձանագրենք, որ օրենսդրական պահանջների խստացման հետևանքով ավելացել են հաղորդումների վրա ծախսվող ֆինանսական միջոցներն, իսկ գովազդային գործունեությունից ստացվող եկամուտները՝ նվազել:

Նշված և այլ գործոնները զրկում են Հեռարձակողներին ֆինանսական անկախությունից, որակյալ բովանդակություն պատրաստելուց և տարածելուց: Հիմնադիրներից և սեփականատերերից, քաղաքական ուժերից ֆինանսական կախվածությունը սահմանափակում է Հեռարձակողների խմբագրական անկախությունը, նպաստում քարոզչական բաղադրիչի ավելացմանը, տեղեկատվության մատուցման կողմնակալությանը և այլն: Հեռարձակողը ստիպված է լինում սահմանափակել խմբագրական անկախությունը՝ եկամտի աղբյուրների կորստից խուսափելու համար:

(...)

Այնուամենայնիվ, Հանձնաժողովն ևս մեկ անգամ մատնանշում է, որ որոշ Հեռարձակողների խմբագրական և կադրային քաղաքականությունը հաճախ հիմնված է նրանց հիմնադիրների, սեփականատերերի քաղաքական պատվերների վրա:

Վերը շարադրվածը թույլ է տալիս արձանագրել, որ ազատ և անկախ մեդիածառայություններ մատուցողների էկոհամակարգն, իրականում, Հայաստանում կայացած չէ, ինչը կբնութագրվեր Հեռարձակողների լիարժեք անկախությամբ, ազատությամբ, բազմակարծությամբ և բազմազանությամբ, որոնք կոչված են սպասարկելու ՀՀ քաղաքացու իրավունքը՝ ստանալ անկողմնակալ, բազմաբնույթ տեղեկատվություն»:

Հանձնաժողովը նաև ներկայումս պահպանում է վերոնշյալ դիրքորոշումը՝ ընդգծելով, որ լրագրողների և Հեռարձակողների խմբագրական անկախության պաշտպանությունը կարևոր նախապայման է ժողովրդավարական հասարակության կայացման և տեղեկատվության ազատ շրջանառության համար: Հանձնաժողովը իր լիազորությունների շրջանակում շարունակելու է նպաստել հեռարձակվող տեսալսողական մեդիայի ոլորտում բազմակարծությանն ու անկախությանը՝ խթանելով հանրության իրազեկվածությունն ու ժողովրդավարության ամրապնդումը:

Տեղեկացնում ենք նաև, որ տեսալսողական հաղորդումների և ծրագրերի վարկանիշների վերաբերյալ տեղեկատվություն կարող եք ստանալ Տեսալսողական մեդիայի ինդուստրիալ կոմիտեից, որն իրավասու է Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի ոլորտում իրականացնել վարկանիշային չափումների գործընթացը՝ իր գործունեությունը կազմակերպելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով սահմանված կարգով:

Հանձնաժողովը բազմիցս շեշտադրել է, որ լրագրողների գործունեությունն առանձնապես կարևոր է հանրության, քաղաքացիական հասարակության և պետական համակարգի համար:

Ուստի, շնորհակալություն ենք հայտնում 2025 թվականի հոկտեմբերին կայանալիք կոնֆերանսին մասնակցելու հրավերի համար: Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը կարևորում է մեդիայի ոլորտում թափանցիկության բարձրացմանն ուղղված նախաձեռնությունները և հետաքրքրված է քննարկմանն առնչվող հարցերով: Ընդունելով հրավերը՝ պատրաստակամություն ենք հայտնում մասնակցել կոնֆերանսին Հանձնաժողովի համապատասխան ներկայացուցչով: Ամսաթվի հստակեցման վերաբերյալ հավելյալ տեղեկացման դեպքում ուրախությամբ կհաստատենք մասնակցության ձևաչափը:

Հարգանքով՝
Իրավաբանական
և լիցենզավորման
վարչության պետ

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐՄԻՆԵ ՆԵՐՍԻՍՅԱՆ
6414690252

X

Signed by: ARMINE NERSISYAN 6414690252

Արմինե Ներսիսյան

Իրավաբանական և լիցենզավորման
վարչության իրավական ապահովման
բաժին
Աննա Հովհաննիսյան
հեռ. 010588053